ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 3»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 3»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2026

ՀՏԴ
ԳՄԴ

Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Մայրենի 3» աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար / Միքայելյան Ա.Վ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ., Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Եր.: Էդիթ Պրինտ, 2026.- 60 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.02.2026 թվականի 219-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ. Ա.

Հեղինակներ՝
Միքայելյան Արմինե Վալերիի, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի
Օհանյան Հասմիկ Վրույրի

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Հովյան Գ. Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Սարատիկյան Լ. Հ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա. Ռ., Դավթյան Հ. Լ.

Սույն ուղեցույցի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների երրորդ դասարանի «Մայրենի 3» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN

ՀՏԴ
ԳՄԴ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ 13
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 57

ՆԱԽԱԲԱՆ

Սույն մեթոդական ուղեցույցն ստեղծված է «Մայրենի 3» գործող դասագրքերին կից առաջադրանքների մեթոդական սկզբունքների, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար դրանց իրականացման առանձնահատկությունների մեկնաբանման և արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով:

Երրորդ դասարանում ուսումնասիրվող թեմաների մեծ մասը նախորդ տարիների կրկնությունն է, սակայն՝ որոշակի բարդացմամբ: Այսպիսի մոտեցումը համապատասխանում է գործնական ուղղվածության սկզբունքին, որը հնարավորություն է ընձեռում քերականական, ուղղագրական, բառապաշարի հարստացման և, ընդհանրապես, խոսքի զարգացման առավել կայուն հմտությունների ձևավորման համար:

Նշենք, որ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների հիմնական ուղղվածությունը ուսուցման գործընթացում դժվարություններ ունեցող սովորողների ոչ միայն ընթերցողական կարողության ձևավորումն է, որը 2–րդ դասարանում արդեն որոշակիորեն հաղթահարված է, այլև ուշադրություն է դարձվում կապակցված բանավոր և գրավոր խոսքի զարգացմանը միտված վարժությունների իրականացմանը: Այս շրջանում ևս կարևորում ենք սովորողների վերլուծահամադրական մտածողությունը, դիտողականությունը, բարձրագույն հոգեկան գործընթացները զարգացնելու հարցը:

Երրորդ դասարանում ևս դեռևս չլուծված են մնում մի շարք խնդիրներ. արտասանական դժվարություններ, հնչութային ընկալումների անբավարարություն, որոնք արտահայտվում են նաև գրավոր խոսքում՝ տառերի, վանկերի փոխարինումներ, վերջավորությունների բացթողումներ և այլն: Սրանց ավելանում են նաև ընթերցողական կարողությունների ձևավորման

դժվարությունները, մասնավորապես՝ կարդացածը իմաստավորելու, ենթատեքստը հասկանալու, բովանդակությունը վերարտադրելու, կերպարները բնութագրելու և այլ՝ անհատական առանձնահատկություններով պայմանավորված դժվարություններ:

Ուսուցման այս փուլում ևս տեսական տեղեկությունները նվազագույնի են հասցված. աշխատանքի հիմնական ուղղությունը գործնական–քերականական վարժությունների իրականացումն է, որը կրում է համակարգային բնույթ: Վերջինս պայմաններ է ստեղծում լեզվական տարրական ընդհանրացումները իմաստավորելու և ընկալելու համար:

«Մայրենի 3» գիրք–տետրում առկա են լեզվական իրողություններ:

1. **Հնչյունաբանություն** (հնչյունը, տառը և վանկը՝ որպես բառի մասեր): Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, դրանց տարբերակումը: Ձայնավոր հնչյունների ուղղագրությունը: Գործնական վարժություններ երկաստիճան և եռաստիճան բաղաձայնների տարբերակման շուրջ: Այբուբեն, տառերի հաջորդականությունը այբբենական կարգով: Վանկը որպես բառի մաս: Միավանկ և բազմավանկ բառեր:

Նշված ուղղություններով շարունակվում են (դեռևս նախորդ շրջափուլերում առկա) վերլուծահամադրական աշխատանքները՝ ձայնավոր, բաղաձայն հնչյունների ճանաչումը և տարբերակումը, տրված, հաջորդող կամ նախորդող հնչյունի առանձնացումը բառից, հնչյունների հերթականության որոշումը բառում և այլն:

2. **Բառ**: Բառի մասին գիտելիքների ընդլայնում. կարողանալ գտնել տրված բառերին իմաստով մոտ և հակառակ իմաստ արտահայտող բառեր: Առանձնացնել նախադասության առարկա, գործողություն և հատկանիշ ցույց տվող բառերը ըստ համապատասխան հարցերի: Կազմել դրանց բառաշարքեր: Կարողանալ իրականացնել

բառատրամաբանական վարժություններ ընդհանրացնող բառերով: Մեծատառի վերաբերյալ գիտելիքների խորացում: Տարբեր կառուցվածք ունեցող բառերի կազմում և ընթերցում, վանկային ընթերցանությունից անցում բառային ընթերցանության:

3. **Նախադասություն**: Նախադասությունների կազմում հենակետային բառերով, բառակապակցություններով, գծապատկերներով և նկարներով: Բնագրում տրված հարցին պատասխանող նախադասության առանձնացում և ընթերցում: Գործնական ծանոթություն պարզ նախադասության կառուցվածքին. գտնել նախադասության այն բառը, որը ցույց է տալիս, թե ում կամ ինչի մասին է խոսվում: Կազմել նախադասություններ՝ գործածելով տրված բառերը: Վերականգնել նախադասության բառերի խախտված կարգը: Հարցերին տալ գրավոր պատասխաններ՝ գործածելով տվյալ հարցի բառերը, տեքստի արտահայտությունները և այլն:

Ընդգծենք, որ ուսուցիչը դասը պետք է վարի մեթոդիկայում ընդունված քայլաշարերով և գործող դասագրքով, սակայն առանձնահատուկ դեպքերում (որպես օժանդակ միջոց) կարող է գործածել գիրք–տետրի առաջադրանքները:

«Մայրենի 3» աշխատանքային գիրք-տետրը սկսվում է այբուբենի կրկնությամբ. սովորողները վերհիշում են այբուբենը, կատարում վարժություններ այբբենական կարգով բառերը դասավորելու ուղղությամբ: Այբբենական կարգի հանաձայն՝ բառացանկում գտնում են անհրաժեշտ բառը, գրում համադասարանցիների անունները և այլն:

Առաջադրանքների կատարման ընթացքում ուսուցիչը պետք է հետամուտ լինի, որ սովորողն անվանի նկարում պատկերված առարկան, իր կատարած գործողությունը զուգակցի խոսքով, պատմի

կատարած աշխատանքի մասին և այլն: Առաջադրանքների մեծ մասն ունի կատարման օրինակը: Ենթադրվում է, որ այն առաջադրանքները, որոնցում տրված չէ օրինակը, սովորողը նախորդների տրամաբանությամբ պետք է կատարի ինքնուրույն: Սակայն եթե դժվարանա, առաջարկում ենք ուսուցչին տալ օրինակը (տե՛ս առաջադրանքների մեթոդական ցուցումները):

Երրորդ դասարանի գործող դասագրքերի ուսումնական նյութի հարմարեցումները իրականացրել ենք հետևյալ ուղղություններով.

- առաջադրանքի ձևակերպումը ներկայացրել ենք պարզ ու հստակ,
- առաջադրանքում ընդգծել ենք բանալի բառերն ու արտահայտությունները,
- փոխել ենք տառաչափը,
- կատարել ենք հուշող նշումներ՝ գույներով, սլաքներով, ընդգծումով և այլն,
- հանձնարարությունների իրականացման ընթացքում նկատի ենք ունեցել դասընկերոջ (խմբի) աջակցությունը,
- որոշ դեպքերում հարցերի պատասխանները առաջարկել ենք ներկայացնել նկարելով կամ բանավոր,
- ներկայացված տեքստերում ընդգծել ենք կարևոր մտքերը, նախադասությունները,
- առաջարկել ենք թեմային առնչվող նկարներ,
- հանձնարարությունը տրոհել ենք առավել մանր քայլերի,
- օգտագործել ենք հնարավորինս շատ սիմվոլներ՝ նկարներ, գծապատկերներ, գունավորումներ, գծանշումներ և այլն,
- կրճատել և հարմարեցրել ենք բնագրերը՝ հանելով բարդ մանրամասները, ավելորդ բազմազանությունը,
- առաջարկել ենք խմբավորման և դասակարգման առաջադրանքներ,

- առաջարկել ենք լրացուցիչ վարժություններ տվյալ թեմայի վերաբերյալ,
- կարևորել ենք սովորողի ճանաչողական հետաքրքրասիրությունը՝ ընտրելով համապատասխան նյութեր,
- մինչև տեքստի ընթերցանությունը առաջարկել ենք կարդալու դժվարություն ներկայացնող բառերի շուրջ տարաբնույթ վերլուծահամադրական աշխատանքներ (հնչյունային, վանկային, բառային մակարդակներում),
- առաջարկել ենք պատմության (տեքստի) քարտեզագրում և այլն:

Գիրք-տետրում առկա որոշ առաջադրանքներ (7, 16, 20, 37, 52, 64, 77, 89, 105, 113 և այլն) միտված են ընթերցած նյութի իմաստը հասկանալու, մտապահելու, բնագրի բովանդակությանը հարազատ պատմելու կարողության զարգացմանը:

Գիրք-տետրում շատ են նաև ճիշտ գրելու կարողության զարգացմանը միտված առաջադրանքներ (8, 14, 18, 23, 28, 29, 33, 35, 42, 44, 50, 54, 62, 64, 66 և այլն): Առաջադրանքների խոսքային նյութը հիմնականում վերցված է 3–րդ դասարանի մայրենիի գործող դասագրքերի թեմաներից, որոնք ունեն ճանաչողական, ուսուցանող և զարգացնող բնույթ (բառապաշար, խոսքային կառույցներ, բնագրերից հատվածներ, առածներ, ասացվածքներ, դարձվածքներ ու հանելուկներ), ինչպես նաև առարկայական նկարները, թեմատիկ նկարների և նկար-պատմությունների բովանդակությունը և այլն: Մի կողմից՝ դրանք հետաքրքրություն են առաջացնում դասագրքում առկա նյութերի հանդեպ, մյուս կողմից՝ դրանցով զանազան առաջադրանքների իրականացումը նպաստում է տվյալ տեքստում հանդիպող կարդալու և գրելու դժվարությունները հաղթահարելուն, օրինակ՝ աշխատանք բաղաձայնների կուտակումով (6, 24, 25, 119, 144), ուղղագրական արժեք ներկայացնող (99, 110, 113, 114, 137 և այլն),

կազմությամբ բարդ և ածանցավոր (27, 28, 29, 36, 76) բառերի շուրջ և այլն:

Այս գիրք-տետրում ևս ներկայացված վարժությունները առաջարկում ենք կատարել.

- ցուցադրումով (Կատարի՛ր այնպես, ինչպես ես: Համեմատի՛ր՝ ճի՞շտ ես կատարել:) և այլն,
- հիշողությամբ, մտային պլանում, իհարկե, նախնական վերլուծական աշխատանքից հետո (Հիշի՛ր: Կրկնի՛ր: Կատարի՛ր: Համեմատի՛ր:) և այլն,
- նախ՝ խոսքային առաջադրանքներով ու ձևակերպումներով, որից հետո՝ ինքնուրույն:

Ինչպես նախորդ գիրք–տետրում, այնպես էլ այստեղ, առաջարկում ենք սովորողի կարդալու դժվարությունների դեպքում վանկային կորերով ընդգծել կարդալու նյութը (բառը, նախադասությունը, տեքստը): Իսկ այն դեպքերում, երբ ԿԱՊԿ ունեցող սովորողը բավարար մակարդակով կարդալ գիտի, առաջարկում ենք չբացատրել առաջադրանքի էությունը. երեխան ինքնուրույն կկարդա առաջադրանքը, կփորձի հասկանալ, թե ինչ և ինչպես պիտի անի, որը նույնպես կնպաստի հասկանալով կարդալու կարողության զագացմանը:

Գիրք-տետրում ներկայացված են այնպիսի առաջադրանքներ, որոնք ԿԱՊԿ ունեցող սովորողը օբյեկտիվորեն կարող է հաղթահարել. վերջինս կբարձրացնի նրա ինքնագնահատականը, տրամադրությունը, ուսումնական գործընթացին մասնակցելու պատրաստակամությունը և, ընդհանրապես, դրական վերաբերմունքը շրջապատի հանդեպ: Միևնույն ժամանակ, նրանց ուսուցման գործընթացի կարևոր պայման ենք համարում մշտապես տրամադրվող հոգեբանական աջակցությունը: Ընդ որում, խոսքը խրախուսանքի կամ պարգևատրման մասին չէ (այն կարող է օգնել սովորողին, կարող է՝ ոչ). խրախուսում ենք լավ կատարած աշխատանքի համար: Մինչդեռ

հոգեբանական աջակցություն պետք է ցուցաբերել անգամ այն դեպքերում, երբ առաջադրանքը այնքան էլ լավ չի կատարվել (նույնիսկ վատ է կատարվել): Այն պետք է ցուցաբերվի անգամ աննշան առաջընթացի համար:

Ոչինչ այնպես չի նպաստում հաջողությանը, ինչպես ինքը՝ հաջողությունը (անգլիական ասույթ): Իսկ ներկայացված առաջադրանքները ԿԱՊԿ ունեցող յուրաքնչյուր սովորողի հնարավորություն կտան հաղթահարել դժվարությունը և հասնել հաջողության:

Ինչպես նախորդ գիրք-տետրերում, այնպես էլ այստեղ առաջադրանքների կատարման ընթացքում հաշվի ենք առել դասարանի բոլոր սովորողների ակտիվ մասնակցությունը, որը ոչ միայն ուսուցման լավագույն միջոցներից է, այլև նպաստում է սովորողների միջև դրական փոխհարաբերությունների ձևավորմանը («երեխան երեխային» սկզբունքով): Զույգով աշխատանքի միջոցով ձևավորվում են նաև ընկերոջից օգնություն ընդունելու, ընկերոջն օգնելու կարողություններ, օրինակ՝ Առաջադրանքներ 7, 38, 46, 47, 61 և այլն: Դրանց իրականացման մեթոդիկան ներկայացված է ուղեցույցի համապատասխան առաջադրանքների մեթոդական ցուցումներում:

Սովորաբար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներն ավելի քիչ հնարավորություն ունեն կարդալու, քան իրենց հասակակիցները: Այս դեպքում ևս սովորողները կարող են աշխատել զույգերով և բարելավել ընթերցանության որակը: Օրինակ՝ ուսուցիչը թղթի վրա կարող է գրել սովորողների անունները՝ սկսելով ամենալավ կարդացողից և ավարտելով ամենավատ կարդացողի անվամբ, այնուհետև մեջտեղից կտրել թուղթը և կազմել զույգեր: Սկզբում կարդում է լավ կարդացող սովորողը, այնուհետև շարունակում է ավելի վատ կարդացողը: Կարևոր է նաև խրախուսել սովորողներին, որ միմյանց հարցեր տան տեքստի վերաբերյալ:

Առաջարկում ենք զույգով աշխատելու ընթացքում սովորողներին որոշ ցուցումներ տալ: Դրանք կարելի է ձևակերպել հետևյալ կանոնների միջոցով. «Օգնի՛ր ընկերոջդ, եթե անհրաժեշտ է», «Վատ մի՛ զգա, եթե ուղղում են քո սխալները», «Անհրաժեշտության դեպքում դիմի՛ր ընկերոջդ» և այլն:

Աշխատանքային գիրք-տետրում ընդգրկված առաջադրանքները հետաքրքրաշատ են, մատչելի: Դրանց կատարման ընթացքում սովորողը նաև գործողություններ է կատարում՝ ինքնուրույն գունավորում, ուրվագծում, ընդգծում, որոշում է տառերի տեղը բառում, տեղափոխում է դրանք՝ ստանալով նոր բառեր, համադրում նկարի, տեքստի բովանդակության հետ, նշում նմանություններն ու տարբերությունները, նկարում, գրելու զանազան վարժություններ կատարում և այլն:

Ներկայացված առաջադրանքներում հաշվի են առնված նաև միջառարկայական կապերը «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Կերպարվեստ», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների հետ, օրինակ՝ Առաջադրանքներ 5, 30, 34, 43 և այլն:

Աշխատանքային գիրք-տետրն ունի նաև հավելված, որի նյութերը կօգտագործվեն տարբեր առաջադրանքների կատարման ընթացքում: Նման առաջադրանքները խթանում են սովորողի հետաքրքրասիրությունն ու ստեղծագործական երևակայությունը:

Մենք համոզմունք ունենք, որ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքները կնպաստեն նաև սովորողների ինքնուրույնության, ստեղծարարության զարգացմանը որոշ դժվարություններ հաղթահարելու ճանապարհով:

Ակնկալում ենք, որ գիրք-տետրը ոչ թե կփոխարինի դասագրքերին ու դրանց կից աշխատանքային տետրերին, այլ կլրացնի ու կօգնի ուսուցչին՝ հաղթահարելու կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնական դժվարությունները մայրենիի դասագործընթացում և ոչ

միայն: Ենթադրում ենք, որ գիրք-տետրում ընդգրկված առաջադրանքները հաջողությամբ կկատարեն այն սովորողները, որոնք արդեն հաղթահարել են նախորդ շրջափուլերի (գրաճանաչության, ընթերցանության շրջաններ) խնդիրները: Ի վերջո, ներկայացված առաջադրանքների նպատակը մայրենի լեզվի նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է համապատասխան ուսուցանող և ոգևորող պայմանների ստեղծումով:

Ընդգծենք, որ գիրք-տետրում ներկայացված առաջադրանքների օրինակով մայրենիի յուրաքանչյուր դասի համար կարելի է ստեղծել համանման առաջադրանքներ՝ հաշվի առնելով վերը նշված սկզբունքային մոտեցումները և սովորողների անհատական կարիքները:

Այս փուլում ևս անհրաժեշտության դեպքում հաջողությամբ կարելի է կիրառել նախորդ երկու գիրք–տետրերի առաջադրանքները:

Հաջորդիվ ներկայացնում ենք առաջադրանքների իրականացման մեթոդական ցուցումները:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

1. Գծիկների վրա գրի՛ր համապատասխան փոքրատառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակն է յուրացրած տառերի կրկնությունը, մեծատառերի և փոքրատառերի տարբերակման ամրապնդումը: Վարժության կատարման ընթացքում ցանկալի է, որ ուսուցման այս փուլում սովորողը ոչ թե այբուբենի՝ եզրագծով կտրած տառերը տեղադրի համապատասխան տեղերում, այլ գրի առնի դրանք: Ընդ որում, այստեղ արդեն տառերը տրված են ոչ թե ձեռագիր տարբերակով, այլ տպագիր հիմքով, որն առավել բարդ է:

Առաջադրանքում բաց թողնված տառերի ընտրությունը պայմանավորված է դրանց առավել հաճախակի կիրառելիությամբ:

Դժվարանալու դեպքում առաջարկում ենք լրացնել շարքերից միայն մեկի տառերը՝ կամ հորիզոնական, կամ ուղղահայաց:

Որոշ դեպքերում կարելի է օգտվել նախորդ գիրք-տետրի համանման առաջադրանքից (տե՛ս Մայրենի 2, Առաջադրանք 1), որտեղ տառերը տրված են ձեռագիր տարբերակով:

2. Ասա՛ այբուբենը: Կարմիր տնակում գրի՛ր բոլոր ձայնավոր հնչյունների տառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դարձյալ հայերեն տառերի կրկնությունն է, որը նախորդ առաջադրանքի տրամաբանական շարունակությունն է: Եթե երեխան դժվարանա ինքնուրույն կատարել առաջադրանքը, առաջարկում ենք վերադառնալ նախորդ առաջադրանքում առկա տառերին և վարժությունն իրականացնել դրանց միջոցով: Առաջադրանքը կատարելուն կնպաստի նաև դրանցում ձայնավորների՝ կարմիր գույնով առանձնացված լինելը, որը հուշող հանգամանք է երեխայի համար:

Այս առաջադրանքի երկրորդ պահանջի նպատակն է կրկնել ձայնավոր հնչյուններին համապատասխանող 6 տառերը:

3. Մարդկանց անուններն արտագրի՛ր/դասավորի՛ր այբբենական կարգով:

Երրորդ առաջադրանքի իրականացման նպատակը այբուբենի իմացությունն ամրապնդելն է, միևնույն ժամանակ՝ գրելու կարողության զարգացումը, մարդկանց անունները մեծատառով սկսելու կանոնի անուղղակի կրկնությունը: Սովորողին օգնելու է այն հանգամանքը, որ յուրաքանչյուր տողի սկզբում տրված է համապատասխան տառը. վերջինս հուշում է հնչյուն-տառերի այբբենական հերթականությունը:

Ցանկալի է, որ առաջադրանքի կատարման ընթացքում սովորողն արտագրի բառը, չնայած առաջարկվել է նաև տեղադրելու գործողություն: Վերջինս այն սովորողների համար է, որոնք դեռևս չեն տիրապետում վարժ գրելու կարողությանը:

4. Արտագրի՛ր բառերը այբբենական կարգով:

Այս առաջադրանքի կատարումն ամրապնդում է նախորդ վարժության ընթացքում իրականացրած գործողությունը՝ ամրապնդելով հնչյուն-տառերի այբբենական հերթականության իմացությունը: Առաջադրանքը ինքնուրույնության տարրեր է պարունակում, որը պայմանավորված է նախորդ առաջադրանքների կատարման ընթացքով: Միևնույն ժամանակ, երեխան արտագրում է բառեր, որոնց նկարներն իր կողմից ծանոթ և սիրված առարկաներ ու խաղալիքներ են պատկերում:

Դժվարության դեպքում կարելի է նախապես կարդալ և որոշել պահանջվող այբբենական հերթականությունը, համարակալել բառերը, հետո՝ արտագրել: Կարող ենք առաջարկել նաև որպես տեսողական հուշում օգտվել Վարժություն 1-ից:

5. Հաշվի՛ր տառերի քանակը տրված բառերում: Գրի՛ր՝ ինչպես տրված է օրինակում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառը տառերի վերլուծելու կարողությունը և բառի տեսողական պատկերացումն ամրապնդելն է, միևնույն ժամանակ՝ «Մաթեմատիկա» առարկայի հետ զուգորդումներ ստեղծելը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ոչ թե գրել թվերը, այլ տեղադրել՝ կտրատած գունավոր թվերից ընտրելով անհրաժեշտը:

6. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր երկու անգամ գործածված բառը:

6-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ևս բառի տառային կազմի և դրա տեսողական ընկալման ամրապնդումն է, ինչպես նաև ուշադրության կենտրոնացումը տրված առաջադրանքի կատարման ճանապարհով: Առաջադրանքը միտված է նաև դասագրքում առկա բանաստեղծության ընթերցանության մշակմանը և սովորողին ընդհանուր թեմայի մեջ ներգրավելուն: Առաջադրանքի կատարման միջոցով կամրապնդվի նաև *անձրև* բառի գրային պատկերը, որը գրության և ընթերցանության դժվարություն է ներկայացնում:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առանց քառատողն ընթերցելու, միայն տեսողական ընկալման միջոցով փորձել գտնել նման գրային պատկեր ունեցող բառը և ընդգծել:

7. Կարդա՛ հանելուկը: Տրված բառերի շարքում կարմիրով ընդգծի՛ր պատասխան-բառը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հետաքրքրաշարժ վարժության միջոցով կարդացածը հասկանալուն նպաստելն է: Դրան օգնում է նաև առաջարկված նկարը: Միևնույն ժամանակ առաջադրանքը ճանաչողական և բառապաշարի հարստացման խնդիր է լուծում:

Դժվարության դեպքում կարելի է առաջարկել համադասարանցիներից մեկին կամ ուսուցչին՝ ընթերցել հանելուկը, իսկ պատասխանը գտնելու համար կարելի է ներգրավել ողջ դասարանը:

8. Արտագրի՛ր ձայնավորով սկսվող բառերը ձախ սյունակում, բաղաձայնով սկսվողները՝ աջ սյունակում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ձայնավորների և բաղաձայնների տարբերակումն է, որն ուղեկցվում է բառերի արտագրությամբ: Վերջինս, սակայն, կրում է ոչ թե մեխանիկական բնույթ, այլ իմաստավորվում է ձայնավորների և բաղաձայնների տարբերակման աշխատանքով: Որպես հուշում՝ ներկայացրել ենք անհրաժեշտ թվով սյունակներ:

Դժվարության դեպքում առաջարկում ենք տվյալ սովորողի համար առանձնացնել որոշ բառեր (ավելի պարզ), որոնց շուրջ նա կատարում է նույն առաջադրանքը:

9. ա/ Անվանի՛ր պատկերված առարկաները: Սլաքներով միացրո՛ւ բառերը համապատասխան նկարներին:

բ/ Արտագրի՛ր ձայնավորով սկսվող բառերը:

9-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառապատկերների տեսողական ընկալման և կարդալու կարողության զարգացումն է: Սակայն մինչ այդ հարկ է, որ սովորողն անվանի պատկերված առարկաները, որոնց հնչյունային կազմը կնպաստի նաև բառապատկերի ճանաչմանը: Այստեղ նկարները տրված են առավել փոքր չափերով, որպեսզի սովորողն ուշադրությունը կենտրոնացնի առավելապես բառապատկերի վրա:

Դժվարության դեպքում առաջարկում ենք համապատասխան նկարի գույնով ընդգծել բառը և կատարել առնվազն երեք համապատասխանեցում:

Առաջադրանքի երկրորդ մասի իրականացման նպատակն է ամրապնդել թե՛ նախորդ առաջադրանքում առկա իրողությունը՝ ձայնավորների տարբերակումը, և թե՛ որոշ բառերի գրապատկերները՝ ձեռքի մկանային հիշողության միջոցով (օրացույց, անձրև):

10. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր 3 տառից կազմված բառերը:

Այս առաջադրանքի նպատակը քառատողի բառերը ճիշտ կարդալու կարողության զարգացումն է. քառատողը վերցված է դասագրքում առկա բանաստեղծությունից: Սովորողն ընտրում է միայն 3 տառից կազմված բառերը, սակայն այդ աշխատանքի ընթացքում հաշվում է նաև մյուս բառերում տառերի քանակը՝ ակամայից յուրացնելով դրանց գրապատկերները:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել առնվազն մեկ այդպիսի բառ:

Ընթերցանության հմտության դրական ամրապնդման նպատակով կարելի է կիրառել **խմբային ընթերցանություն**, որը հնարավորություն է ստեղծում դասարանի բոլոր սովորողների համար զարգացնել կարդալու հմտությունները և ինքնավստահությունը սեփական ուժերի հանդեպ:

11. Կարդա՛ նախադասությունները: Ընդգծի՛ր տոների անվանումները:

11-րդ առաջադրանքի իրականացման նպատակը մեզանում ընդունված և դասագրքում հանդիպող տոների ճանաչումն ու դրանց միջոցով ճիշտ կարդալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում կարելի է սովորողին առաջարկել տրված նախադասություններից ընտրել և կարդալ միայն տոների անվանումները՝ ընդգծելով դրանք (իր ամենասիրելի տոներից 2–ը): Կարելի է օգտագործել նաև տոների վերաբերյալ տեսանյութեր՝ կիրառելով ուսումնառության համընդհանուր դիզայնի սկզբունքները:

12. Լրացրո՛ւ տարվա եղանակը:

Այս առաջադրանքի իրականացումը որոշակի ինքնուրույնություն է պահանջում, քանի որ սովորողը պետք է ոչ թե արտագրի բառերը, այլ հիշողությամբ գրի դրանք: Այս առաջադրանքի արդյունավետ իրականացման համար առաջարկում ենք մինչև առաջադրանքի կատարումը վերհիշել տարվա եղանակները, գրել դրանց անվանումները գրատախտակին:

Դժվարության դեպքում առաջարկում ենք տարվա եղանակների անունները խառը հերթականությամբ գրել բառաքարտերի վրա և առաջարկել սովորողին արտագրել համապատասխան տեղում:

13. Կարդա՛ բառերը: Կանաչով ընդգծի՛ր դրանցում կրկնվող բառը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կազմությամբ բարդ բառերի գրապատկերի տեսողական ընկալման զարգացումն է, հատկապես այս առաջադրանքում ընտրված բաղադրիչում առկա ույ երկհնչյունը ընկալելու և ճիշտ կարդալու կարողության զարգացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջին բառում ընդգծել *բույր* արմատը, որպեսզի սովորողն առավել հեշտ կողմնորոշվի:

14. Արտագրի՛ր՝ լրացնելով համապատասխան բառը:

14-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու, գրելու կարողությունների զարգացումն է, որի կատարման ընթացքում երեխային ուղղորդում են համապատասխան գույները: Հիմնական նպատակը տրված նախադասությունների հասկացումն է, որովհետև դրանք ենթարկվում են պարզ քերականական կանոնների:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընտրել միայն մեկ կամ երկու նախադասություն:

15. Կազմի՛ր բառեր տրված օրինակով և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը տարբեր արմատներից բարդ բառեր ստանալն է, դրանք գրառելը և կարդալը: Կարելի է նաև որոշ դեպքերում հակառակ կողմից սկսել. կարդալ թվաբանական գործողության արդյունքում ստացված բառը, հետո գրել: Նմանօրինակ առաջադրանքները սովորողներին ծանոթ են նախորդ գիրք-տետրերից, հետևաբար նրանք դժվարություն չեն ունենա: Սակայն դժվարանալու դեպքում առաջարկում ենք հոդակապով բարդություններ չկազմել: Կարելի է վերջիններս միայն բանավոր կատարել:

16. ա/ Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր նախադասությունների առաջին բառերը:

բ/ Տեքստից արտագրի՛ր հարցի պատասխանը:

16-րդ առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է, ինչպես նաև նախադասության գաղափարի ամրապնդումը: Եթե սովորողը դժվարանում է կարդալ տեքստը, առաջարկում ենք նախ գտնել և ընդգծել նախադասությունների առաջին բառերը, հետո՝ կարդալ տեքստը:

Առաջադրանքի 2-րդ մասը վերաբերում է տեքստի բովանդակությունն ընկալելուն և գրավոր խոսքի զարգացմանը, միևնույն ժամանակ զարգացնում է երկխոսություն կառուցելու կարողությունը:

17. Միավորի՛ր արմատները և գրի՛ր ստացված բառը:

17-րդ առաջադրանքի իրականացման նպատակը *արմատ* հասկացությանը ծանոթացնելն է, ինչպես նաև կարդալու, գրելու կարողության զարգացումը. ընտրվել են այնպիսի բառեր, որոնց

միավորումը հոդակապ չի պահանջում: Սովորողները պետք է իրար միացնեն տրված արմատները, կարդան ստացված բառերը և գրեն:

18. Կարդա՛ բանաստեղծության տրված հատվածը: Տնակի մեջ արտագրի՛ր մեկ ձայնավոր ունեցող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու կարողության զարգացումն է, որին պետք է նպաստի կրկնակի աշխատանքը բառերի շուրջ տրված առաջադրանքով: Սովորողն առանձնացնում է միայն մեկ ձայնավորով բառերը, արտագրում դրանք՝ առավել լավ ընկալելով բառապատկերը: Տնակի մեջ գծված տողերի քանակը հուշում է մեկ ձայնավոր ունեցող բառերի քանակը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք տնակի առաջին տողի վրա օրինակներ գրել՝ *դու, մի*:

19. Բառերը գծով միացրո՛ւ համապատասխան նկարներին:

Տե՛ս Առաջադրանք 9: Բառերի ընտրությունը պայմանավորված է դասագրքի տեքստում դրանց առկայությամբ:

20. ա/ Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր մինչև երրորդ նախադասությունը:

բ/ Ընտրի՛ր ճիշտ պատասխանը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու կարողության զարգացումն է, տեքստում նախադասությունների սահմանները ճանաչելը և առանձնացնելը: Առաջադրանքի երկրորդ պահանջի նպատակն է ստուգել տեքստը հասկանալու աստիճանը:

Դժվարության դեպքում կարելի է երկրորդ անգամ կարդալ տեքստը (համադասարանցին, ուսուցիչը), հետո ընտրել ճիշտ պատասխանը: **Բազմակի ընթերցանությունը** ևս հարմարեցում է: Երեխաները սիրում են նույն պատմվածքը լսել մի քանի անգամ. սկզբում նրանք բառերն են ասում, հետո՝ նախադասությունները և

վերջում արդեն կրկնում են ողջ ստեղծագործությունը: Պատմվածքի բովանդակությանը ծանոթ լինելը հեշտացնում է ընթերցանությունը:

21. Կարդա՛ և գուշակի՛ր հանելուկը: Գրի՛ր պատասխան-բառը:

Հանելուկի գուշակումն անմիջականորեն առնչվում է նախորդ տեքստի ընկալման հետ և, եթե նախորդ առաջադրանքը հաղթահարել ենք, ապա հանելուկի գուշակումը և գրառումը բարդ չի լինի: Դժվարության դեպքում կարելի է առաջարկել սովորողին միայն անվանել առաջարկվող հանելուկի պատասխան-բառը:

22. Կարդա՛ «Հայրենի իմ հող» բանաստեղծությունից մի հատված: Հաշվի՛ր և գրի՛ր՝ քանի՞ անգամ է գործածվել *սիրտ* բառը:

22-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու, անհրաժեշտ բառը տեքստում որոնելու և գտնելու կարողությունների զարգացումն է:

Դժվարանալու դեպքում կարելի է առաջին բառն ընդգծել, հետո առաջարկել, որ սովորողն ընդգծի մյուսները, ապա հաշվի ընդգծված բառերի քանակը և համապատասխան թիվը գրի տրված վանդակում:

23. Գրի՛ր ստացված բառը և կարդա՛:

Տե՛ս Առաջադրանք 15:

24. Կարդա՛ բանաստեղծության քառատողը: Բառերում ընդգծի՛ր իրար կողքի երկու բաղաձայնները:

24-րդ առաջադրանքի իրականացման նպատակն է որոշակի գործողություն կատարելու միջոցով հաղթահարել կարդալու դժվարությունները, որոնք հանդիպում են բաղաձայնների կուտակումով բառերն ընթերցելիս:

Դժվարության դեպքում կարելի է առաջարկել գտնել և ընդգծել առնվազն 2 այդպիսի բառ:

25. Կարդա՛ քառատողը: Ընդգծի՛ր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

Տե՛ս Առաջադրանք 24:

26. Կանաչով ընդգծի՛ր այն բառերը, որոնք բնութագրում են Երևանը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը նախապատրաստական որոշակի աշխատանք կատարելուց հետո տեքստի ընթերցումն առավել դյուրին դարձնելն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք բառաշարքից թողնել միայն *հյուրասեր, ջերմ, չար, գեղեցիկ* բառերը:

27. Առանձնացրո՛ւ արմատն ու ածանցը՝ ըստ օրինակի:

Այս առաջադրանքի կատարման նպատակն է գունային լուծումների միջոցով ԿԱՊԿ ունեցող սովորողին ծանոթացնել *արմատ* և *ածանց* հասկացությունները:

28. Վերջածանցներով և արմատներով կազմի՛ր բառեր:

29. Նախածանցներով և արմատներով կազմի՛ր բառեր:

Տե՛ս Առաջադրանք 15, սակայն այս դեպքում թեման վերաբերում է արմատին և ածանցին:

30. Ըստ թվերի հերթականության արտագրի՛ր/փակցրու նախադասությունները և կարդա՛ նամակը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կապակցված գրավոր տեքստ ստեղծելու կարողության զարգացումն է:

Առաջարկված թվերը կօգնեն, որ ԿԱՊԿ ունեցող սովորողը հեշտությամբ կողմնորոշվի նախադասությունները ճիշտ հերթականությամբ դասավորելու և արտագրելու ընթացքում: Առաջադրանքի կատարումը կնպաստի նաև նամակ գրելու կարողության զարգացմանը:

Դժվարության դեպքում կարելի է 3-րդ և 5-րդ նախադասությունները հանել:

31. ա/ Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Կարմիրով ընդգծի՛ր *Նոր տարի* բառակապակցությունը:

բ/ Քանի՞ անգամ է գործածվել *Նոր տարի* բառակապակցությունը, գրի՛ր թիվը վանդակում:

Տե՛ս Առաջադրանք 22:

32. Կարդա՛ քառատողը: Արտագրի՛ր երեխաների անունները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դասագրքում զետեղված բնագրի բովանդակության յուրացման գործընթացը հեշտացնելն է առաջադրանքի մասնակի կատարման ճանապարհով, այն է՝ երեխաների անուններն առանձնացնելով և դրանք արտագրելով:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել երեխաների անունները կամ արտագրել միայն մեկը:

33. Լրացրո՛ւ բառի պակասող վանկը և ստացի՛ր մարդկանց անուններ:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը մարդկանց անունների գրության ամրապնդումն է, բայց քանի որ նախորդ վարժության մեջ նմանօրինակ առաջադրանք առկա է, մենք, բարդացնելով նախորդ առաջադրանքի պահանջը, մեծացրել ենք երեխայի ինքնուրույնությունը. առաջարկել ենք առանձին վանկերից

ստանալ մարդկանց անուններ՝ վանկերը ներկայացնելով խառը և շրջված դասավորությամբ:

Դժվարության դեպքում առաջարկում ենք համարակալել վանկերը համապատասխան թվերով կամ սլաքներով միացնել իրար՝ կարդալով միայն ստացված անունները:

34. ա/ Կարդա՛ նախադասությունները: Հաշվի՛ր և գրի՛ր նախադասության բառերի քանակը քառակուսու մեջ:

բ/ Գրի՛ր հարցերի պատասխանները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը նախադասությունը բառերի բաժանելու և դրանց քանակը որոշելու կարողության զարգացումն է: Այն միևնույն ժամանակ առարկայական զուգորդումներ է ստեղծում «Մաթեմատիկա» առարկայի հետ:

Առաջադրանքի 2-րդ պահանջը միտված է կարդացածը հասկանալուն: Հարցերն այնպես են ձևակերպված, որ սովորողը դրանց միջոցով ևս մեկ անգամ ընկալում է տրված նախադասության միտքը, որը հեշտացնում է կարդացածի ընկալումը, հետևաբար նաև պատասխանը որոշելն ու գրի առնելը:

Դժվարության դեպքում կարելի է սովորողին առաջարկել միայն նախադասություններից մեկը կամ երկուսը՝ առանց համապատասխան թիվը գրելու:

35. Արտագրի՛ր մրգերի անվանումները տոնածառի խաղալիքների մեջ:

35-րդ առաջադրանքի իրականացման նպատակը պատկերված մրգերի անվանումները հետաքրքրաշարժ ձևով գրի առնելն է. պահանջվում է օգտագործել համապատասխան գույնը: Վերջինս նպաստում է մրգերի մասին պատկերացումների ամրապնդմանը, միևնույն ժամանակ բառերը խաղային տարրերով գրելը խթանում է գրելու հմտության զարգացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընտրել միայն այն մրգերը, որոնք երեխան այդ պահին ճանաչում է: Հնարավորության դեպքում կարելի է ցուցադրել նաև իրական մրգեր:

36. Արտագրի՛ր ածանցավոր բառերը ճիշտ տեղերում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ածանցավոր բառերի ճանաչումն ու դրանց գրության ամրապնդումն է: Գունային հարմարեցումները հնարավորություն են տալիս սովորողին առանց դժվարության առանձնացնել նախածանցավոր և վերջածանցավոր բառերը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք պակասեցնել բառերի քանակը՝ ընտրելով ամենագործածական մի քանի բառ:

37. ա/ Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր 4 բառ ունեցող նախադասությունները:

բ/ Տեքստից դուրս գրիր հարցերի պատասխանները:

37-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու կարողության, մասնավորապես կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է: 4 բառ ունեցող նախադասություններն ընդգծելը և տրված հարցերի պատասխանները տեքստից արտագրելը մի քանի անգամ տեքստին անդրադառնալու և այն մի քանի անգամ կարդալու անհրաժեշտություն է ստեղծում, որը նպաստելու է վերը նշված խնդիրները լուծելուն:

Դժվարության դեպքում առաջարկում ենք կատարել միայն առաջադրանքի առաջին պահանջը: Որպես պարզեցում՝ կարելի է ընդգծել պատասխանները և առաջարկել սովորողին, որ արտագրի համապատասխան հարցի ներքևում:

38. ա/ Կարդա՛ և կռահի՛ր հանելուկի պատասխանը: Պատասխան-բառում ընդգծի՛ր ածանցը:

բ/ Որոշի՛ր ածանցի տեսակը՝ նախածանց կամ վերջածանց:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հանելուկի պատասխանը կռահելու ճանապարհով մտածողության զարգացումն է և ածանցավոր բառի տարբերակումը: Այս առաջադրանքն առաջարկում ենք իրականացնել զույգով:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքի 2-րդ պահանջը չիրականացնել, բավարարվել պատասխան բառը տրված տողի վրա գրի առնելով:

39. Կարդա՛ տրված նախադասությունների ընդգծված բառերը:

39-րդ առաջադրանքը վերցված է դասագրքում զետեղված տեքստից: Սովորողը կարդում է միայն ընդգծված բառերը: Այս եղանակով նա ընթերցում է տեքստի հիմնական գաղափարը ներկայացնող արտահայտությունները և հասկանում կարդացածի միտքը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծված բառերը նշել նաև վանկային կորերով՝ կարդալու գործընթացը հեշտացնելու նպատակով:

40. Գրի՛ր հարցերը՝ ըստ օրինակի:

41. Գրի՛ր հարցերը՝ ըստ օրինակի:

40 և 41-րդ առաջադրանքների իրականացման նպատակը տրված բառերին համապատասխան հարց տալու կարողության զարգացումն է: Տրված օրինակները կնպաստեն, որ սովորողը կարողանա կատարել վարժությունը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքները կատարել նախ՝ բանավոր, հետո՝ գրավոր: Ըստ անհրաժեշտության կարելի է ավելացնել նաև օրինակները:

42. Արտագրի՛ր բառերը համապատասխան սյունակներում:
Տե՛ս Առաջադրանք 8:

43. ա/ Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր *ոսկի* բառը: Հաշվի՛ր՝ քանի՞ անգամ է գործածվել այն: Գրի՛ր թիվը քառակուսու մեջ:
բ/ Պատասխանի՛ր հարցերին մեկ բառով:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու և կարդացածը հասկանալու կարողությունների զարգացումն է, ինչպես նաև *ոսկի* բառի ուղղագրությունն ամրապնդելը: Առաջադրանքի իրականացման միջոցով ստեղծվում է նաև առարկայական զուգորդում «Մաթեմատիկա» առարկայի հետ:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքի 2–րդ պահանջն իրականացնել բանավոր՝ ուսուցչի հուշումով: Այս և նմանատիպ առաջադրանքների կատարման ընթացքում խորհուրդ է տրվում կիրառել ***ուղղորդված բարձրաձայն ընթերցանություն*** տեխնիկան, որը մեծապես նպաստում է աշակերտների սահուն և վարժ կարդալու ունակության զարգացմանը, ինչպես նաև բառապաշարի հարստացմանը: Ուղղորդված ընթերցանությունը ներառում է բարձրաձայն ընթերցանությունը և սահուն ընթերցանության մոդելավորումը: Ուսուցիչը, բարձրաձայն կարդալով, հետաքրքրություն է առաջացնում սովորողների շրջանում, ինչին հաճախ հաջորդում են տեքստի վերաբերյալ քննարկումը և ամփոփումը, մյուս կողմից՝ տեքստին ծանոթ լինելն օգնում է սովորողներին ավելի հեշտությամբ կարդալ այն:

44. Արտագրի՛ր գործողություն ցույց տվող բառերը ճիշտ տեղերում:

Այս առաջադրանքի իրականացումը մի քանի նպատակ է հետապնդում. հասկանալ կարդացածը, կազմել նախադասություններ, գրել դրանք և ընկալել գործողություն ցույց տվող բառերը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք միևնույն գույնով նշել համապատասխան տողը և բառը:

45. Գունավորի՛ր այն շրջանները, որոնց կից գրված բառերը ցույց են տալիս մեկ առարկայի գործողություն:

45-րդ առաջադրանքի իրականացման նպատակը խոսք կառուցելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում կարելի է ցույց տալ օրինակը՝ առաջադրանքներից մեկը կատարելով:

46. Կարդա՛ հանելուկը: Ընդգծի՛ր գործողություն ցույց տվող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը նախորդ առաջադրանքում առկա իրողության ամրապնդումն է հանելուկի պատասխանը կռահելու միջոցով:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքը կատարել զույգով:

47. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծի՛ր տոնի անվանումը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալը և տոնը և նրա անվանումը ճանաչելն է:

Դժվարության դեպքում կարելի է առաջադրանքն իրականացնել զույգով:

48. Լրացրո՛ւ գործողություն ցույց տվող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը գործողություն ցույց տվող բառի գաղափարի ամրապնդումն ու նախադասություն կառուցելու կարողության զարգացումն է: Գույները տվյալ դեպքում օգնելու են, որ սովորողը կողմնորոշվի և ճիշտ ընտրություն կատարի:

Դժվարության դեպքում առաջարկում ենք լրացնել միայն մեկ կամ երկու նախադասություն:

49. Շարունակի՛ր շարքը՝ ըստ օրինակի:

49-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառապաշարի հարստացումն է գործողություն ցույց տվող բառերով, ինչպես նաև գրելու կարողության զարգացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք վարժությունը կատարել նախ՝ բանավոր, հետո՝ գրի առնել:

50. ա/ Կարդա՛ տոների վերաբերյալ նախադասությունները: Լրացրո՛ւ անավարտ նախադասությունը:

բ/ Ե՞րբ ենք նշում Անկախության տոնը: Արտագրի՛ր պատասխան-նախադասությունը:

50-րդ առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է: Առկա է նաև փոքրիկ ինքնուրույն աշխատանք, որը վերաբերում է սեփական ծննդյան օրը նշելուն:

Դժվարության դեպքում առաջարկում ենք վարժության 2-րդ պահանջը չկատարել:

51. Կարդա՛ քառատողը: Կարմիրով ընդգծի՛ր ճ տառը, կանաչով՝ չ տառը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու կարողության զարգացումն ու *ճ, չ* տառերի տարբերակումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել առաջարկվող տառերից մեկը:

52. ա/ Կարդա՛ առակը: Ընդգծի՛ր *ցախավել* բառը:

բ/ Արտագրի՛ր առակի վերջաբանը և ասա՝ ի՞նչ հասկացար:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու և կարդացածը հասկանալու կարողությունների զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք վարժության երկրորդ առաջադրանքը չկատարել:

53. Տրված բառերի կողքին արտագրի՛ր հակառակ իմաստ ունեցող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառապաշարի հարստացումն է հականիշ բառերով:

Դժվարության դեպքում առաջարկում ենք գույներով համապատասխանեցնել տողը պահանջվող բառի հետ:

54. Կարդա տեքստը: Արտագրի՛ր մայրիկի խոսքը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ճիշտ կարդալու, կարդացածը հասկանալու և գրելու կարողությունների զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել մայրիկի խոսքը, որը պահանջվում էր արտագրել:

55. Արտագրի՛ր հոմանիշները ճիշտ տեղերում:

Տե՛ս Առաջադրանք 53:

56. ա/ Կարդա՛ քառատողը: Արտագրի՛ր կենդանիների անվանումները:

բ/ Ժամը քանիսի՞ն բացվեց օրը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու և գրելու կարողությունների զարգացումն է: Առաջարկված 2 դատարկ տողերը հուշում են, որ կենդանիների անվանումները երկուսն են:

Դժվարության դեպքում կարելի է ոչ թե արտագրել, այլ ընդգծել կենդանիների անվանումներից առնվազն մեկը:

57. Կարդա՛ քառտողը: Կապույտով ընդգծի՛ր թիվ ցույց տվող բառը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է և նախնական ծանոթությունը թվական խոսքի մասին:

Դժվարության դեպքում առաջարկում ենք վարժությունը կատարել նախ՝ բանավոր, հետո՝ ընդգծել պահանջվող բառը:

58. Կարդա՛ հանելուկը: Կռահի՛ր և գրի՛ր պատասխան բառը:

Տե՛ս Առաջադրանք 46:

59. Կարդա՛ քառատողը: Կապույտով ընդգծի՛ր թիվ ցույց տվող բառը:

Տե՛ս Առաջադրանք 57:

60. ա/Կարդա՛ քառատողը: Համեմատի՛ր ընդգծված բառերը. ինչո՞վ են նման, ինչո՞վ են տարբեր:

բ/ Գրի՛ր, թե ժամը քանիսին ես արթնանում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացած հասկանալու, համեմատելու կարողությունների, մտածողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք վարժության 2-րդ պահանջը կատարել բանավոր:

61. Կարդա՛ պատմությունը: Հաշվի՛ր՝ քանի՞ հերոս կա: Արտագրի՛ր նրանց անունները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է, ինչպես նաև կարդալու դժվարությունները հաղթահարելը: Մյուս կողմից՝ նաև գրավորի զարգացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ուսուցչին կամ համադասարանցուն ընդգծել պատմության հերոսների անունները:

62. ա/ Արտագրի՛ր նախադասությունները՝ գծերի վրա գրելով անհրաժեշտ բառը:

բ/ Դո՛ւրս գրիր հակառակ իմաստ ունեցող բառերը՝ ըստ օրինակի:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է, ինչպես նաև հակառակ իմաստ ունեցող բառերի ճանաչումը նախադասությունների մեջ:

Դժվարության դեպքում առաջարկում ենք արտագրել միայն մեկ նախադասություն, միայն հակառակ իմաստ ունեցող բառերը, կամ վարժությունը կատարել բանավոր: Խորհուրդ է տրվում կիրառել նաև ֆիզիկական հուշումներ և ժեստեր:

63. Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր հայ ժողովրդին բնորոշող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալուն նպաստելն է և, քանի որ պահանջվող բառերն ընդգծված են, ապա առաջադրանքը նաև հուշում է պարունակում:

Դժվարության դեպքում առաջարկում ենք միայն արտագրել ընդգծված բառերը:

64. ա/ Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր հերոսների անունները:

բ/ Դո՛ւրս գրիր հարցի պատասխանը:

Տե՛ս Առաջադրանք 61:

65. Կարդա՛ նախադասությունները: Շրջանագծի մեջ նշի՛ր. ո՞ր գործողությունն ես դու կատարում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ինչպես կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է, այնպես էլ բարեվարքության կանոնների յուրացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ուղղորդվել նկարներով:

66. ա/ Ճիշտ տեղերում արտագրի՛ր հայ հայտնի մարդկանց ազգանունները:

բ/ Նրանցից երկուսը մանուկների համար հեքիաթներ են գրել. ընդծգի՛ր նրանց անունները:

Այս առաջադրանքի իրականացմանը նպաստում են գունային հուշումները, հետևաբար դրա իրականացումը նաև ճանաչողական խնդիր է լուծում:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքը կատարել բանավոր:

67. Կարդա՛ առածները: Արտագրի՛ր 2–րդ առածը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և ճիշտ գրելու կարողությունների զարգացումն է:

Դժվարության դեպքում առածները կարող է ընթերցել ուսուցիչը կամ համադասարանցիներից մեկը, իսկ սովորողը կորոշի՝ որն է երկրորդ առածը:

68. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Արտագրի՛ր՝ ընդգծված բառերի փոխարեն գրելով համապատասխան թիվը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը թիվ ցույց տվող բառի վրա սովորողի ուշադրությունը հրավիրելն է, ինչպես նաև գրելու կարողության զարգացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք արտագրել միայն ընդգծված բառերը՝ դիմացը գրելով համապատասխան թիվը:

69. Տված բառերը արտագրի՛ր համապատասխան սյունակներում:

Տե՛ս Առաջադրանք 42:

70. ա/ Կարդա՛ պատմությունը:

բ/ Արտագրի՛ր Հրանտի խոսքերը:

գ/ Կարդա՛ նախադասությունները: Նշի՛ր՝ ո՞րը կդնես պատմության վերջում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու և գրելու կարողությունների զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքի 3-րդ պահանջը չկատարել:

71. Կարդա՛ քո պարտականությունները: Նշի՛ր, թե դրանցից որն ես կատարում:

Տե՛ս Առաջադրանք 65:

72. ա/ Կարդա՛ բանաստեղծությունը:

բ/ Գրի՛ր այն բառերը, որոնք դու ասում ես մայրիկիդ:

Տե՛ս Առաջադրանք 70:

73. ա/ Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր հերոսների անունները:

բ/ Ընդգծի՛ր տեղանունները:

Տե՛ս Առաջադրանք 64, սակայն այստեղ ավելանում է նաև տեղանունների ընդգծումը:

74. Կարդա՛ պատմությունը: Հաշվի՛ր՝ քանի՞ անգամ է գործածվել *ոսկոր* բառը, և գրի՛ր թիվը:

Տե՛ս Առաջադրանք 31:

75. Կարդա՛: Արտագրի՛ր նախադասությունները՝ բառերը փոխարինելով համապատասխան հոմանիշներով:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառապաշարի հարստացումն է հոմանիշները նախադասություններում արտագրելու միջոցով, որին նպաստելու է գույների առկայությունը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք արտագրել միայն հոմանիշային զույգերը, որոնք համապատասխանեցված են գույներով, կամ կատարել բանավոր:

76. Շարունակի՛ր շարքը՝ ըստ օրինակի:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը արմատի և ածանցի գաղափարի ամրապնդումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքը կատարել բանավոր:

77. ա/ արդա՛ պատմությունը:

բ/ Ընդգծի՛ր այն նախադասությունները, որոնցից իմանում ենք, թե ինչ էր *ուզում* Տիգրանը:

Տե՛ս Առաջադրանք 70:

78. Միավորի՛ր արմատները և գրի՛ր ստացված բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը նոր բառեր կազմելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքը կատարել բանավոր կամ կարող ենք օգնել սովորողին վանկային կորեր գծել նրա ձեռքից բռնելով:

79. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր 3 միավանկ բառ:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ուշադրությամբ կարդալու կարողության զարգացումն է բառերը վանկերի բաժանելու ճանապարհով:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել պահանջվող բառերը:

80. Պատասխանի՛ր հարցերին և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բանավոր և գրավոր խոսքի, մասնավորապես՝ խոսքի քերականական կողմի զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքը կատարել բանավոր:

81. Կարդա՛ միջատների մասին հանելուկները, ընտրի՛ր և գրի՛ր պատասխան-բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հանելուկների կռահման ճանապարհով միջատների մասին սովորողների պատկերացումների ընդլայնումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք հանելուկներից մեկի պատասխանը գուշակել և գրել:

82. Շարունակի՛ր:

Տե՛ս Առաջադրանք 78:

83. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Նկարի՛ր քո պատկերացրածը:

Առաջադրանքի նպատակը կարդացածը հասկանալու կարողության և երևակայության զարգացումն է:

Դժվարության դեպքում կարելի է լսել բանաստեղծության քառատողը (կարող է կարդալ ուսուցիչը կամ համադասարանցիներից մեկը) և նկարել:

84. ա/ Կարդա՛ բանաստեղծության շարունակությունը: Ընդգծի՛ր այն բառը, որը սկսվում և ավարտվում է ձայնավորով:

բ/ Հարցին պատասխանի՛ր մեկ բառով:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ուշադիր կարդալու և կարդացածը հասկանալու կարողության, ինչպես նաև գրավորի զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել պահանջվող բառերը:

85. Կարդա՛ բառազույգերը: Ընդծի՛ր՝ ինչո՞վ են տարբերվում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառը տառերի վերլուծելու, տառային կազմերը համեմատելու, տարբերությունները նկատելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք դիտարկել առաջին երեք բառազույգերը:

86. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Որոշի՛ր՝ քանի անգամ է գործածվել *երգ* բառը, և գրի՛ր թիվը:

Տե՛ս Առաջադրանք 74:

87. Ընդգծի՛ր բոլոր բառերում կրկնվող արմատը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բարդ բառերի մասին գաղափարի ամրապնդումն է, ինչպես նաև բառը բաղադրիչների բաժանելու կարողության զարգացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ոչ բոլոր բառերը դիտարկել:

88. Համապատասխանեցրո՛ւ դարձվածքները բառերի կամ բառակապակցությունների հետ ըստ գույնի և կարդա՛:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դարձվածքներն ընթերցելը և դրանց իմաստը հասկանալն է, որին նպաստելու է գունային հարմարեցումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք համապատասխանեցնել դարձվածքներից մեկը կամ երկուսը:

89. Կարդա՛ պատմությունը: Տրված բառերից ո՞րն է համապատասխանում դարձվածքի բացատրությանը: Գրի՛ր:

բ/ Ի՞նչ կհարցնեիր շանը, եթե դու լինեիր Հովիկի փոխարեն: Գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը դարձվածքի մասին սովորողի պատկերացումների ամրապնդումն է, ինչպես նաև կարդացածը հասկանալու կարողության զարգացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք հարցին պատասխանել բանավոր:

90. Ընդգծի՛ր 4 վանկ ունեցող բառերը:

Տե՛ս Առաջադրանք 79:

91. Արտագրի՛ր դարձվածքները՝ համապատասխանեցնելով դրանք իրենց բացատրություններին:

Տե՛ս Առաջադրանք 88:

92. Լրացրո՛ւ աղյուսակը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը առարկայի հատկանիշները ինքնուրույն գրառելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք վարժությունը կատարել բանավոր: Կարելի է մինչև առաջադրանքը կատարելը քննարկել առարկաների հատկանիշները և հնարավորության դեպքում որպես հուշում օգտագործել բնական մրգեր:

93. Բառերն արտագրի՛ր համապատասխան սյունակներում:

Տե՛ս Առաջադրանք 42:

94. Կարդա՛ բանաստեղծությունը: Արտագրի՛ր քամու խոսքը:

Տե՛ս Առաջադրանք 61:

95. Վերականգնի՛ր առածները և արտագրի՛ր:

Տե՛ս Առաջադրանք 88:

96. ա/ Կարդա՛ տեքստը: Արտագրի՛ր *էպոս* բառն ունեցող նախադասությունները:

բ/ Գրի՛ր պատասխանը:

Տե՛ս Առաջադրանք 73:

97. Առարկա ցույց տվող բառերից ստացի՛ր գործողություն ցույց տվող բառեր՝ ըստ օրինակի:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը առարկա և գործողություն ցույց տվող բառերի տարբերակումն ու դրանք վերափոխելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք վարժությունը կատարել միայն բանավոր:

98. Գործողություն ցույց տվող բառերից ստացի՛ր առարկա ցույց տվող բառեր՝ ըստ օրինակի:

Տե՛ս Առաջադրանք 97, սակայն՝ հակառակ տրամաբանությամբ:

99. Տրված բառերում կանաչով ընդգծի՛ր *տերև* արմատը:

Տե՛ս Առաջադրանք 87:

100. Արտագրի՛ր իմաստով մոտ բառերը ճիշտ տեղերում:

Տե՛ս Առաջադրանք 75:

101. ա/Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր *թրթուր* բառը: Հաշվի՛ր և գրի՛ր, թե քանի անգամ է այն հանդիպում տեքստում:

բ/ Պատասխանի՛ր հարցին՝ օգտվելով տեքստից:

Տե՛ս Առաջադրանք 86:

102. ա/ Շարունակի՛ր ըստ օրինակի:

բ/ Բառերից մեկով կազմի՛ր նախադասություն:

Տե՛ս Առաջադրանք 76, սակայն այս դեպքում պահանջվում է նաև կազմել նախադասություն:

103. Արտագրի՛ր իմաստով մոտ բառերը ճիշտ տեղերում:

Տե՛ս Առաջադրանք 55:

104. ա/ Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծի՛ր *խրճիթ* բառը:

բ/ Հարցի պատասխանը գրի՛ր մեկ բառով:

Տե՛ս Առաջադրանք 86:

105. Կարդա՛ բանաստեղծության վերջին հատվածը: Արտագրի՛ր խրճիթը նկարագրող հատվածը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է, ինչպես նաև բառապաշարի հարստացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք միայն բանավոր կատարել կամ առաջարկել, որ երեխան նկարի իր պատկերացրած խրճիթը:

106. Կատարի՛ր գործողությունը, ստացի՛ր բարդ բառ և գրի՛ր:

Տե՛ս Առաջադրանք 78:

107. ա/ Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր գույների անվանումներն իրենց գույներով:

բ/ Պատասխանի՛ր հարցերին:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է, որը տվյալ դեպքում առաջարկել ենք գույների միջոցով:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքի երկրորդ պահանջը կատարել բանավոր:

108. Տրված բառերը վանկային կորերով բաժանի՛ր վանկերի: Արտագրի՛ր համապատասխան սյունակներում:

Տե՛ս Առաջադրանք 93:

109. ա/ Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր գրողների անունները:

բ/ Լրացրո՛ւ ազգանունները՝ օգտվելով տեքստից:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու, մասնավորապես կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքի երկրորդ հատվածն իրականացնել բանավոր:

110. Արտագրի՛ր հատուկ անունները համապատասխան սյունակներում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ինչպես կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է, այնպես էլ մեծատառի գրության ամրապնդումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք լրացնել աղյուսակի միայն 1-ին (2-րդ) սյունակները: Կարելի է կիրառել նաև ֆիզիկական և բանավոր հուշումներ:

111. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր հայերի համար ամենանշանավոր մարդու անունը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով և ուշադրությամբ կարդալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք անհրաժեշտ անունը նախ որոշել բանավոր կերպով, հետո արտագրել:

112. ա/ Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր հայ հայտնիների անուն-ազգանունները:

բ/ Գրի՛ր հարցի պատասխանը:

Տե՛ս Առաջադրանք 109:

113. ա/ Կարդա՛ պատմությունը: Ընդգծի՛ր հատուկ անունները: Ասա՝ դրանք մեծատառո՞վ են գրվում, թե՞ փոքրատառով:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հատուկ անուններում մեծատառի գրության ամրապնդումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքի վերջին պահանջը չկատարել:

114. Արտագրի՛ր բառերը՝ ընդգծված տառերը գրելով կարմիրով:

114-րդ առաջադրանքի իրականացման նպատակը ուղղագրության ամրապնդումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք բառերի քանակը պակասեցնել:

115. Արտագրի՛ր բառերը համապատասխան տեղում:

Տե՛ս Առաջադրանք 100, 103:

116. Կարդա՛ առածները: Արտագրի՛ր բոլոր առածներում կրկնվող բառը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ուշադրությամբ կարդալու և կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել պահանջվող բառը առաջին առածում, իսկ մյուսներում սովորողը կգտնի ինքնուրույն:

117. Կարդա՛ Հովհաննես Թումանյանի քառյակը: Ընդգծի՛ր այն բառը, որը 2 անգամ է գործածվել:

Տե՛ս Առաջադրանք 116:

118. Ընդգծի՛ր գարնանը վերաբերող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու, միևնույն ժամանակ, դասագրքում առկա տեքստն անսխալ կարդալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել պահանջվող բառերից միայն երկուսը:

119. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Արտագրի՛ր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

Տե՛ս Առաջադրանք 25:

120. Բառազույգերում ընդգծի՛ր նույն արմատը:

Տե՛ս Առաջադրանք 87, 99:

121. Նախադասություններում լրացրո՛ւ փակագծում տրված բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը նախադասության անդամները քերականորեն ճիշտ համապատասխանեցնելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջին նախադասության օրինակով տալ կատարման օրինակը:

122. Գրի՛ր հաջորդող տարվա եղանակը, ամիսը:

122-րդ առաջադրանքի իրականացման նպատակը մտածողության, կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում կարելի է առաջարկել կատարման օրինակը:

123. Արտագրի՛ր գարնանը վերաբերող նախադասությունները:

Տե՛ս Առաջադրանք 118, սակայն այս դեպքում այն վերաբերում է նախադասություններին:

124. Նախադասությունների մեջ լրացրո՛ւ բաց թողնված բառը:

Տե՛ս Առաջադրանք 121:

125. Արտագրի՛ր *և* ունեցող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը *և*–ի ուղղագրության ամրապնդումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջին բառը գրել, չնայած այն առանձնացված է:

126. Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր 3-րդ նախադասությունը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդալու և գրելու կարողության զարգացումն է, միևնույն ժամանակ՝ նախադասության սահմանների գիտակցումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել 3-րդ նախադասությունը կամ մինչև առաջադրանքը կատարելը միասին համարակալել նախադասությունները:

127. Կարդա՛ պատմության շարունակությունը: Տեքստից արտագրի՛ր հարցի պատասխանը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք հարցին բանավոր պատասխանել:

128. Տրված բառերում ընդգծի՛ր ային, ություն, ավոր, իկ, ան, դժ ածանցները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը *արմատ* և *ածանց* հասկացությունների ամրապնդումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել բառի արմատը:

129. Որոշի՛ր և համապատասխան տեղում արտագրի՛ր իմաստով մոտ բառը:

Տե՛ս Առաջադրանք 103:

130. Կարդա՛ Հովհաննես Թումանյանի «Թռչունի մտածմունքը» բանաստեղծության առաջին և վերջին քառատողերը: Ընդգծի՛ր *աշխարհ* բառը: Հաշվիր՝ քանի՞ անգամ է այն գործածվել:

Տե՛ս Առաջադրանք 101:

131. Որոշի՛ր և համապատասխան տեղում արտագրի՛ր իմաստով հակառակ բառը:

Տե՛ս Առաջադրանք 103, 129:

132. Տրված բառերը վանկատի՛ր վանկային կորերով:

Տե՛ս Առաջադրանք 108:

133. ա/ Կարդա՛ պատմվածքը: Արտագրի՛ր աղջկա խոսքը:
բ/ Պատասխանը արտագրի՛ր տեքստից:

Տե՛ս Առաջադրանք 70:

134. Արտագրի՛ր բառերը համապատասխան սյունակներում: Ընդգծի՛ր ան, իկ, ենի, ոտ ածանցները:

Տե՛ս Առաջադրանք 128:

135. Ինչպիսի՞ն ես դու. արտագրի՛ր քեզ բնութագրող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու և գրելու կարողության զարգացումն է

Դժվարության դեպքում առաջարկում ենք սահմանափակվել մեկ-երկու բառով:

136. Արագրի՛ր օգտակար սովորույթների անվանումները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը թե՛ կարդալու և գրելու կարողության զարգացումն է և թե՛ օգտակար սովորությունները ճանաչելն ու դրանք կիրառելը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք բանավոր կատարել վարժությունը դասընկերոջ հետ:

137. Տրված բառերից արտագրի՛ր *ե* տառով սկսվող բառերը:

Տե՛ս Առաջադրանք 125:

138. ա/ Կարդա՛ պատմությունը:

բ/ Պատասխանի՛ր հարցին մեկ բառով և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք 2 անգամ կարդալ տեքստը:

139. Պատկերների դիմաց գրի՛ր/փակցրո՛ւ համապատասխան բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը պատկերները անվանելու և դրանք ինքնուրույն գրելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք պատկերների անվանումները գրել խառը հերթականությամբ, սովորողը դրանք կարտագրի համապատասխան տեղում:

140. Արտագրի՛ր նույն ածանցն ունեցող բառերը համապատասխան սյունակներում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառը բաղադրիչների բաժանելու, կարդալու կարողությունները զարգացնելն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք պարզապես ընդգծել ածանցները:

141. Բառերը արտագրի՛ր ճիշտ տեղերում:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու և գրելու կարողությունների զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքը կատարել բանավոր:

142. Նշի՛ր, թե որ արտահայտություններն ես դու կիրառում ամեն օր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը թե՛ կարդացածը հասկանալու կարողությունը և թե՛ բարեկիրթ հաղորդակցման հմտությունները զարգացնելն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք պակասեցնել արտահայտությունների քանակը կամ կատարել բանավոր:

143. Տրված բառերից արտագրի՛ր *ինչպիսի՞* հարցին պատասխանող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հատկանիշ ցույց տվող բառերի ճանաչումն է հարցին համապատասխանեցնելով:

Դժվարության դեպքում առաջարկում ենք նախապես ընդգծել պահանջվող բառերը:

144. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Արտագրի՛ր իրար կողքի 4 բաղաձայն ունեցող բառը:

Տե՛ս Առաջադրանք 119:

145. Կարդա՛ բանաստեղծության հաջորդ հատվածը: Հաշվի՛ր՝ քանի՞ անգամ է գործածվել *հայելի* բառը: Գրի՛ր թիվը:

Տե՛ս Առաջադրանքներ 86, 31, 117:

146. Արտագրի՛ր տղային և Կարենին բնութագրող բառերը առանձին սյունակներում:

146-րդ առաջադրանքի իրականացման նպատակը հատկանիշ ցույց տվող բառերի մասին ունեցած պատկերացումների ամրապնդումն է, ինչպես նաև դրական ու բացասական հատկանիշները տարբերակելու կարողության զարգացումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք ընդգծել տղաներից մեկին վերաբերող ածականները:

147. ա/ Կարդա՛ պատմությունը: Արտագրի՛ր կենդանիների անվանումները:

բ/ Պատասխանի՛ր հարցերին 1 բառով՝ օգտվելով տեքստից:

Տե՛ս Առաջադրանք 107:

148. ա/ Կարդա՛ առակը: Ընդգծի՛ր աղվեսի խոսքը:

Տե՛ս Առաջադրանքներ 70, 133:

149. Բառաշարքից դո՛ւրս գրիր ռ-ով վերջացող բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառերը հնչյունատառային վերլուծության ենթարկելու կարողության զարգացումն ու դրանց տարբերակումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք նախ՝ կատարել բանավոր, հետո՝ գրի առնել:

150. ա/ Կարդա՛ «Ճպուռն ու մրջյունը» ստեղծագործության համառոտ տարբերակը: Ընդգծի՛ր մրջնի խոսքերը կանաչ գույնով:

բ/ Նշի՛ր այն ասացվածքը, որը համապատասխանում է ստեղծագործությանը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հասկանալով կարդալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջադրանքի վերջին պահանջը չկատարել:

151. Տրված բառաշարքում ընդգծի՛ր միավանկ բառերը:

Տե՛ս Առաջադրանքներ 93, 108:

152. Կարդա՛ պատմությունը և դո՛ւրս գրիր հարցի պատասխանը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք տեքստի առաջին հատվածը պատմել, իսկ երկրորդ հատվածը կարդալ, որտեղ էլ գտնվում է հարցի պատասխանը:

153. Կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր ըստ օրինակի:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը բառակապակցության մասին պատկերացման ձևավորումն է, ինչպես նաև առարկա և հատկանիշ ցույց տվող բառերի մասին պատկերացումների ամրապնդումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք կատարել բանավոր:

154. Արտագրի՛ր համապատասխան գույնի բառը և կարդա՝ ինչ են ասում նշված խմբերին:

154-րդ առաջադրանքի իրականացման նպատակը բառապաշարի հարստացումն է գունային հուշումների միջոցով:

Դժվարության դեպքում առաջարկում ենք պակասեցնել բառերի քանակը:

155. Արտագրի՛ր բարեմաղթանքը բացիկի մեջ՝ կետերի փոխարեն ավելացնելով անունները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը իրական գործունեության համատեքստում կապակցված գրավոր խոսք կառուցելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք նախ՝ կատարել բանավոր, հետո՝ գրավոր:

156. ա/ Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Ընդգծի՛ր գետակին բնութագրող բառերը:

բ/ Արտագրի՛ր հարցերի պատասխանները:

Տե՛ս Առաջադրանքներ 123, 148, 150:

157. Պատասխանի՛ր փակագծում տրված հարցերին՝ ճիշտ տեղում արտագրելով բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը ինքնուրույն նախադասություն կազմելու և այն գրի առնելու կարողության զարգացումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք առաջին օրինակը գրել տողի վրա:

158. Դի՛ր համապատասխան կետադրական նշանները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կետադրական նշանների մասին ունեցած պատկերացումների ամրապնդումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք կատարել առաջին երեքը:

159. ա/ Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր թիվ ցույց տվող բոլոր բառերը:
բ/ Հարցի պատասխանը գտի՛ր տեքստից և գրի՛ր:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը թվականի մասին նախնական պատկերացում ձևավորելն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք միայն ընդգծել այդ բառերը:

160. Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Փակագծում տրված բառերից ո՞րը չկա տեքստում: Ընդգծի՛ր այդ բառը:

161. ա/ Կարդա՛ բանաստեղծության հատվածը: Փակագծում տրված բառերից որի՞ն դու հանդիպեցիր:
բ/ Բանաստեղծության մեջ նշվածներից ո՞ր օգտակար գործողություններն ես կատարում: Արտագրի՛ր այդ տողերը:

160, 161-րդ առաջադրանքների իրականացման նպատակը կարդալու ընթացքում ուշադրության և դիտողունակության զարգացումն է, միևնույն ժամանակ՝ հասկանալով կարդալու կարողության ամրապնդումը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք պակասեցնել համեմատվող բառերի քանակը:

162. ա/ Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր *Արամ Խաչատրյան* անունը և ազգանունը: Հաշվի՛ր՝ քանի անգամ է կրկնվել անունը, քանի անգամ՝ ազգանունը: Գրի՛ր թվերը:

բ/ Ի՞նչ կենդանիներ էին նվիրել Արամ Խաչատրյանին:

Տե՛ս Առաջադրանքներ 123, 148, 150, 156:

163. Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր մեծատառով գրվող անունները:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը հատուկ անունները մեծատառով գրելու կարողության ամրապնդումն է ոչ միայն մարդկանց անվանումներում, այլև տեղանուններում:

Դժվարության դեպքում առաջարկում ենք կատարել նախ բանավոր, հետո՝ ընդգծել:

164. ա/Կարդա՛ բառակապակցությունները: Գտի՛ր դրանք տեքստում և ընդգծի՛ր:

բ/ Տեքստից արտագրի՛ր հարցի պատասխանը:

Տե՛ս Առաջադրանք 153:

165. Տրված բառերից արտագրի՛ր 2 վանկ ունեցող բառերը:

Տե՛ս Առաջադրանքներ 93, 108, 151:

166. Կարդա՛ «Ծառի խնդրանքը» բանաստեղծությունը: Արտագրի՛ր այն քառատողը, որից իմացար, թե ինչ օգուտ է տալիս ծառը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը կարդացածը հասկանալու կարողության ամրապնդումն է, ինչպես նաև ծառի տված օգուտները ևս մեկ անգամ կրկնելը:

Դժվարության դեպքում առաջարկում ենք կատարել բանավոր:

167. Գրի՛ր, թե որ արմատից են կազմվել տրված բառերը:

168. Գրի՛ր բառերը համապատասխան սյունակներում:

Տե՛ս Առաջադրանք 87:

169. ա/ Կարդա՛ բանաստեղծությունը: Ընդգծի՛ր *ի՞նչ* հարցին պատասխանող առնվազն 5 բառ:

բ/ Արտագրի՛ր վերջին երեք տողը: Քառակուսու մեջ գրի՛ր՝ քանի անգամ է գործածվել շեշտը (՛):

Այս առաջադրանքի իրականացման նպատակը առարկա ցույց տվող բառերի և դրանց տրվող հարցի, ինչպես նաև կետադրական նշանների վերաբերյալ ունեցած պատկերացումների ամրապնդումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք կատարել առաջադրանքի միայն երկրորդ պահանջը:

170. Պատասխանի՛ր հարցերին՝ օգտագործելով փակագծերում տրված բառերը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը նախադասություն կազմելու կարողության և գրավորի զարգացումն է:

Դժվարության դեպքում կարելի է գործողություն ցույց տվող բառերն առաջարկել նախադասությանը համապատասխան քերականական վերջավորությամբ:

171. Արտագրի՛ր նախադասությունները՝ լրացնելով բաց թողնված բառերը:

Այս առաջադրանքը նման է նախորդին, սակայն այն ենթադրում է նաև ավելի շատ ինքնուրույնություն:

172. ա/ Կարդա՛ տեքստը: Ընդգծի՛ր տեղանունների առաջին տառերը:

բ/ Տարվա ո՞ր եղանակների մասին կարդացիր: Գրի՛ր դրանք:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը մեծատառի գործածության մասին ունեցած պատկերացումների ընդլայնումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք երկրորդ պահանջը կատարել բանավոր: Առաջարկում ենք նաև դասարանում ունենալ

մեծատառի գործածության կանոնների տեսողական պարզեցված պաստառ:

173. Լրացրո՛ւ աղյուսակը՝ ըստ օրինակի:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը առարկա և գործողություն ցույց տվող բառերի տարբերակումն է:

Դժվարության դեպքում կարելի է առաջադրանքը կատարել նախ՝ բանավոր, հետո՝ գրավոր:

174. ա/ Կարդա՛ բանաստեղծությունը: Արտագրի՛ր աշնան մրգերի անվանումները:

բ/ Նկարի՛ր քո սիրելի տարվա եղանակը:

Տե՛ս Առաջադրանքներ 11, 123, 126, 146:

175. Կարդա՛: Արտագրի՛ր պատմության վերջաբանը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը տեքստի կառուցվածքի մասին պատկերացումների ձևավորումն է:

Դժվարության դեպքում առաջարկում ենք այն կատարել բանավոր, կամ կարելի է սովորողի հետ միասին ընդգծել վերջաբանը:

176. ա/ Կարդա՛: Տրված նախադասություններից ընտրի՛ր և գրի՛ր պատմության շարունակությունը:

բ/ Արտագրի՛ր պատմության նախաբանը:

Տե՛ս Առաջադրանք 175:

177. ա/ Կարդա՛ տեքստը: Կանաչով ընդգծի՛ր այն հատվածը, որտեղից իմանում ես, թե ծառի տված գերաններից ու տախտակներից ինչ են պատրաստում:

բ/ Արտագրի՛ր վերջաբանը: Հաշվի՛ր՝ քանի շեշտ կա վերջաբանում: Գրի՛ր թիվը:

Այս առաջադրանքի իրականացման նպատակը տեքստի կառուցվածքի մասին պատկերացումների ամրապնդումն է, ինչպես նաև կարդացածը հասկանալու կարողության զարգացումը: Միևնույն ժամանակ սովորողի ուշադրությունը (հաշվելու միջոցով) հրավիրվում է կետադրական նշանների գործածությանը:

Դժվարության դեպքում կարելի է առաջադրանքը կատարել բանավոր կամ սովորողի հետ միասին ընդգծել վերջաբանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բալայան Ա., Չիբուխչյան Կ., Մայրենի 3, 1–ին, 2–րդ մասեր, Ե., 2024, 104 էջ, 120 էջ:
2. Թեթև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ուսուցման մեթոդական ձեռնարկ, Մայրենի (1-4-րդ դասարաններ), Աշխ. խումբ՝ Կ. Չիբուխչյան, Լ. Ավագյան, Գ. Մկրտչյան և այլք, Եր., 2009, 63 էջ:
3. Թորոսյան Կ., Չիբուխչյան Կ., Գյուրջինյան Դ., «Մայրենի 3» աշխատանքային տետր, Ե., 2009, 32 էջ:
4. Միքայելյան Ա., Ավագիմյան Ա., Ավագյան Լ., Ենոքյան Տ., «Հետաքրքրաշատ մայրենի», Ե. 2025, 71 էջ:
5. Ներառական կրթության արդյունավետության բարձրացումը մայրենիի դասերի միջոցով, «Մանկավարժական միտք», 1-2, 2016:
6. Պետրոսյան Ս., Ներառական կրթությունը գործնականում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Հայաստան, 2018, 73-76 էջ:
7. Սարգսյան Վ. և ուրիշներ, Մայրենի 3, 1–ին, 2–րդ մասեր, Ե., 2024, 92 էջ, 112 էջ:
8. Аксенова А., Методика обучения русскому языку в коррекционной школе, М., «Владос», 2002, 320 с.
9. Лалаева Р., Логопедическая работа в коррекционных классах, М., «Владос», 2001, 222 с.
10. Лалаянц С., Варданян А., Овсепян А., обучение русскому языку с легкой степенью умственной отсталости в начальных классах, Е., 2010, 64 с.
11. Fuchs, D., Fuchs, L., & Burish, P. (2000). Peer-Assisted Learning Strategies: An Evidence-Based Practice to Promote Reading Achievement. Learning Disabilities Research and Practice, 15(2), 85-91. http://www.readingrockets.org/strategies/paired_reading

12. Hasbrouck, J. (2006). For Students Who Are Not Yet Fluent, Silent Reading Is Not the Best Use of Classroom Time. American Educator, Summer 2006, 30(2).
http://www.readingrockets.org/strategies/choral_reading
13. Kylene Beers, (1957) “When kids can’t Read” A Guide for Teachers, 34-36.

Օգտագործված հղումներ

http://www.readingrockets.org/article/spelling-and-students-learning-disabilities
https://www.readingrockets.org/article/strategies-promote-comprehension

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Միքայելյան Ա.Վ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ՄԱՅՐԵՆԻ 3»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 70:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում:
Երևան, Դ.Մալյան 43